ինք ալ աստուած մըն է եւ կամ Աստուծոյ պէտքը չունի: Սատանային գործած մեղքը այսպիսի մեղք մըն է եւ կամ Աստուծոյ պէտքը չունի: Սատանային գործած մեղքը այսպիսի մեղք մըն էր: եւ ահա այսպիսի մահացու մեղք մըն է բոլոր չար, անիրաւ, անաստուած եւ անբարի մարդոց սնուցած հպարտութիւնը: Հպարտ մարդոց վախճանը կործանում է: «Տէր անբարտաւանից հակառակ կայ» ըսած է Սուրբ Գիրքը: Եթէ հպարտանալ կ'ուզենք հպարտանանք Աստուծմով:

ԿԱՐԷՆ ՔՀՆՅ. ԿՏԱՆԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Ս. Զատկուան առիթով, շնորհաւորանքի գիրեր եւ հեռագրեր առաքուեցան Հոգեւոր ու Կառավարական պետերուն եւ Առաջնորդներուն, որոնց շնորհաւորագիրերը ստացած է Պատրիարք Սրբազան Հայրը.-

- Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին.
- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսին.
- Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պողոս Բ. Պապին.
- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Ամեն. Տ. Ալէքսէյ Բ. Սրբազան Պատրիարքին.
- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Մեսրոպ Բ. Մութաֆեան Սրբազան Պատրիարքին.
- Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տքթ. Միխայէլ Եսայեանին.
- Թեմական Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն.

digitised by A.R.A.R.@

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 241

Սուրբ Զատիկ 2002թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ
Երուսաղեմ, Իսրայել

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք,

Մարդացյալ Փրկչի Հրաշազարդ Հարության բարի ավետիսով ամենայն հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Քրիստոսավանդ սիրո Մեր ողջույնն ու շնորհավորանքները Ձեզ, Տիրախնամ Աթոռիդ ուխտապահ եկեղեցականաց և համայնքային վարչության բարեջան անդամներին:

Քրիստոսի Հրաշափառ Հարությունը, որ առանցքն է քրիստոնեական մեր հավատքի և մահվան դեմ կյանքի հաղթանակի կենսապարգև խորհրդով 2000 տարի լույս ու հույս է խնկարկել հայրենի մեր կյանքում, այսօր վերստին՝ ազգային ու եկեղեցական կյանքից ներս ծառացած մարտահրավերների ու դժվարությունների առջև, հաղթանակի վստահությամբ ապրելու նոր կամք ու ոգեշնչում է բերում հայորդյաց հոգիներին:

Հուսացյալ ենք, որ Փրկչի ամենակեցույց Հարությամբ կարող պիտի լինենք, իբրև «Տիրոջ այգու մշակներ», հայրենաբնակ ու աշխարհասփյուռ մեր զավակների ուժերի մեկտեղմամբ իրականացնել ավելի լավ կյանք ժառանգելու Տիրոջ խոստումը և մեր ժողովրդի պատմությունը ուղղորդել արդարության, խաղաղության և առաջընթացի շավիղներով:

Մեր հայցն ու մաղթանքն է, որ Փրկչի Հարության կենսապագև շնորհները առատապես բաշխվեն ազգերին ու ժողովուրդներին, եկեղեցիներին, իշխանություններին ու պետություններին, որպեսզի համայն աշխարհում թագավորեն երջանկությունը, համերաշխությունն ու ապահովությունը:

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք, «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» երկնածայն օրհներգությունը Մեր շուրթերին՝ համայն հայոց Միածնաէջ Սուրբ Տաճարում աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով Հարուցյալ Փրկչի հանապազ օրհնությունն ու հովանին Ձեզ, Բարեխնամ Աթոռիդ հոգևոր սպասավորներին, եկեղեցական վարչությանց պատվարժան անդամներին, հավատավոր Մեր զավակներին, որպեսզի Տիրոջ Հարությամբ շնորհազարդված հայոց համայնքներում ու օջախներում մշտամնա բնակություն հաստատեն սերն ու բարությունը, հույսն ու լավատեսությունը:

Թող Ամենախնամ Տերը զորակից ու աջակից լինի Ձեզ՝ պարգևելով բեղմնավոր գործունեություն՝ ի պայծառություն Ձեր Աթոռի, հուրախություն զինվորյալ միաբանության և ի մխիթարություն բարեպաշտ հավատացյալ հայորդյաց:

Եղբայրական սիրո ողջունիվ,
աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

118/02

Ս. Զատիկ, 2002

Անթիլիաս,

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի
Երուսաղէմ.

Սիրելեաւ՛ եղբայր ի Քրիստոս,

Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի Յարութեան խորհուրդով լեցուն այս օրերուն, Անթիլիասի Մայրավանքէն եղբայրական ոգիով եւ քրիստոնէական ջերմ սիրով կ՚ողջունենք Ձերդ Սիրելութիւնը եւ Սրբոց Ցակոբեանց ուխտեալ միաբանութեան բոլոր անդամները:

Յարութեան տօնը կեցուցիչ է լոյսի ու յոյսի տօնն է: Քրիստոս իր երկնային լոյսով յաղթեց դերեզմանի խաւարին եւ իր աստուածային յոյսով մարդկային կեանքին առջեւ բացաւ յաւիտենական կեանքի ճանապարհը: Այդ լոյսով լուսաւորուած ու յոյսով զօտեպնդուած Քրիստոսի աշակերտները Աստուծոյ Որդւոյն հրաշափառ Յարութիւնը տարին աշխարհ, զայն դարձնելով քրիստոնէական եկեղեցւոյ հիմնաքարը, անոր հաւատքին աղբիւրը եւ առաքելութեան առանցքը:

Մեր եկեղեցին եւս Քրիստոսի Յարութեամբ հագուցած մեր ժողովուրդի կեանքին մէջ դարեր շարունակ եղաւ տարածիչը Քրիստոսի յարութենէն ճառագայթող լոյսին ու յոյսին: Իր կեանքի խաւար ճամբաներուն դիմաց մեր ժողովուրդը այդ լոյսով լուսաւորուեցաւ, իր կեանքի դժնդակ պայմաններուն մէջ այդ յոյսով զօրացաւ ու քալեց դէպի յաւերժութիւն: Այսօր եւս մեր եկեղեցին կոչուած է դառնալու լոյսի ու յոյսի ջահը հայրենիքի ու աշխարհատարած մեր ժողովուրդի կեանքի ճամբաներուն վրայ:

Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին առիթով Մեր մաղթանքն է որ Ամենաբարին Աստուած Ձեզի պարգեւէ քաջառողջութիւն եւ բազմառատ արդիւնաւորութեամբ պսակէ Ձերդ Եղբայրութեան ամբողջանուէր ծառայութիւնները՝ յօգուտ մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ հաւատացեալ ժողովուրդին:

Եղբայրական ջերմ սիրով,

Աղօթակից՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

digitised by A.R.A.R.@

SECRETARIAT OF STATE

N. 510.605

From the Vatican, 25 April 2002

Your Beatitude,

His Holiness Pope John Paul II was pleased to receive the Easter greetings which you graciously sent, and he has asked me to convey his heartfelt thanks.

Rejoicing with you in the light of Easter, His Holiness prays most fervently that the peace of the Risen Lord, who slept in the silence of death and wakens us now to new life, will come upon you and those entrusted to your pastoral care, especially in these days of distress for Jerusalem and the Holy Land. For it is Christ alone who brings "lasting salvation to mankind, so that the world may see the fallen lifted up, the old made new, and all things brought to perfection, through him who is their origin" (*Roman Missal*).

Echoing the ancient Christian cry, "Christ is risen! He is risen indeed, alleluia!", I extend to Your Beatitude the fraternal good wishes of His Holiness that the Easter celebrations of the Armenian Apostolic Church in Jerusalem will be full of the joy which death cannot destroy, and I commend you and your people to the intercession of Saint James and the unfailing protection of Mary, Mother of God.

With sentiments of deep esteem, I remain

Yours sincerely in Christ,

+ Angelo Card. Sodano

Secretary of State

His Beatitude
Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem
Saint James Monastery
P.O. Box 14235
IL-91141 Jerusalem

digitised by A.R.A.R.@

Патриарх
Московский
и всея Руси

119034 Москва, Чистый пер., 5

ЕГО БЛАЖЕНСТВУ,
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ II,
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА

Ваше Блаженство!

Светло празднуя Воскресение Господа нашего и Спасителя Иисуса Христа и приобщаясь всемирной пасхальной радости, приветствую Вас словами вечного жизнеутверждающего свидетельства:

ХРИСТОС ВОСКРЕСЕ!

"Ныне вся исполнишася света, небо и земля и преисподняя; да празднует убо вся тварь востание Христово, в немже утверждается". В благоговейном трепете и ликующем славословии перед тайной Воскресения торжествует ныне Церковь Христова Святую Пасху. "Смерть! где твое жало? ад! где твоя победа?" (Ос. 13, 14). Вслед за пророком Осией и апостолом Павлом мы озарены надеждой, что Всемогущий Бог "воскресит и нас силою Своею" (1 Кор. 6, 14), дабы войти нам в радость Господа нашего (Мф. 25, 23).

В эти радостные дни, с любовью и пасхальным целованием поздравляя Вас, от всей души желаю Вам всегда радоваться, непрестанно молиться, за всё благодарить (1 Фес. 5, 16-18) и неизменно пребывать в немеркнущем свете Христова Воскресения. Да сохранит и укрепит Вас Господь, преумножая Ваши силы, на многая и благая лета!

С любовью о Христе Воскресшем

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Пасха Христова
2002 г.
Москва

digitised by A.R.A.R.@

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ստանպուլ, 30 Մարտ 2002
թիւ 5027

Նորին Շնորհազարդ Տէրութիւն
ՏԷՐ ԹՈՐԳՈՄ Բ
Պատրիարք Հայ Երուսաղէմի
Սուրբ Երուսաղէմ

Ամենապատիւ Տէր,

Ս. Զատկուան արշալոյսին այս տարի եւս հոգեւոր անխառն հրճուանքով կ'երգենք Ս. Ներսէս Լամբրոնացիի յօրինած տողերը. «Այսօր Զատիկ մեր զենմամբ Քրիստոսի. արասցուք տօն ցնծութեամբ նորոգեալքս ի հնութենէ մեղաց ասելով. ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Այսօր կը յիշենք նաեւ Ս. Պօղոս Առաքեալի խրատականը, ըստ որում՝ Զատկական ուրախութիւնը լրիւ ապրելու համար, հարկաւոր է ազատիլ «հին խմոր»էն ու ամբողջութեամբ նո՛ր զանգուած մը ըլլալ, հիմնուելով անկեղծութեան եւ ճշմարտախօսութեան վրայ (Ա Կորնթ. Ե.6-8): Հոգեւոր նորոգութեան սոյն գաղափարով համակուած հաւատացեալը անգամ մը եւս առիթ կ'ունենայ անդրադառնալու, որ Քրիստոսով է որ նորոգուեցաւ խաւարէ դէպի լոյս, մահէ դէպի կեանք, ապականութենէ՝ անապականութիւն, եւ անգիտութենէ դէպի Աստուածային գիտութեան ճշմարտութիւն:

Ս. Զատկի հրաշանորոգ օրերուն, կը մաղթենք եւ կ'աղօթենք, որ Բարձրեալն Աստուած Ձերդ Ամենապատուութեան պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք, բազմամեայ եւ արեւշատ գահակալութիւն:

Այսու գրիւ Ձերդ Ամենապատուութեան կը փոխանցենք նաեւ Պատրիարքական Աթոռոյս հոգեւորական դասուն, խորհրդականներուն, համայնքային եւ եկեղեցական վարչութեանց եւ հաւատացեալ ժողովուրդի սիրոյն եւ ակնածանաց հաւաստիքը:

Մատչիմք խոնարհ աղօթակցութեամբ եւ եղբայրական սիրոյ ողջունիւ, աւետելով.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց.
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔ
ՀԱՅՈՑ Կ.ՊՈԼՍՈՅ

digitised by A.R.A.R.@